

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՄԻ ՔԵՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

Բազմահարուստ հայ գրականությունն ունի իր ոսկե ֆոնդը, որի գոհարներից մեկն էլ Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունն է, և որն ստեղծման պահից դարձավ մեր ժողովրդի հոգևոր կառույցի խորքային արտահայտություններից մեկը և անցնելիք ճանապարհի հավերժական ուղեկիցը:

Բանաստեղծության ծնունդը կապված էր ինչպես հեղինակի կյանքի որոշակի դժվարին պահերի, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրում տեղի ունեցած ողբերգական իրողությունների հետ:

Առաջին աշխարհամարտի՝ 1918 թ. կայացած զինադադարից հետո Վ. Թեքեյանը, որ մեջընդմեջ բնակվում էր Կահիրեում և Փարիզում, 1920 թ. վերջերին հրաժարվում է Փարիզի ազգային պատվիրակության անդամակցությունից և վերադառնում Կ. Պոլիս՝ հավատացած լինելով, թե եվրոպական տերությունները վերջնականապես տապալելու են թուրքական բռնապետությունը:

Թեքեյանն ընտրվում է Ռամկավար կուսակցության կենտրոնական վարչության անդամ, ձեռնարկում Ռամկավար և Ազատական կուսակցությունների միացումը, խմբագրում «Ժողովուրդին Չայնը» օրաթերթը, ընտրվում Ազգային երեսփոխանական ժողովի մեալում:

Ազգային վերածննդի, միասնության ու առաջընթացի հույսերն ու ծրագրերը շատ մեծ էին...: Սակայն 1922 թ. նոյեմբերին քեմալական ուժերի Կ. Պոլիս ներխուժումից մի քանի օր առաջ Թեքեյանը ստիպված նորից է հեռանում Թուրքիայից:

Հաջորդող տարիներին Թեքեյանը զբաղվում է հայ գաղթականների ու որբերի գործերով: Այցելում է Մերձավոր Արևելքի մի շարք երկրներ, տարագիր հայերի խնդիրներով դիմում ինչպես օտար երկրների իշխանություններին, այնպես էլ հայ ազգային ու կուսակցական շրջանակներին, ծրագրում մի քանի հարյուր հայ որբերի ուղարկել Հայաստան:

Այս շրջանում (1923-1924) Թեքեյանը ապրում է անձնական խոր տագնապների մեջ, ջանում հայտնաբերել այն ուժերը, որոնք կարող էին անհատական ու ազգային գոյատևման փրկօղակներ լինել:

Խոսելով իր այդ ծանր վիճակի մասին՝ 1924-ին Լևոն-Չավեն Սյուրմելյանին ուղղած իր նամակներից մեկում գրում է. «... երբեք այսքան մենակ, այսքան օտար զգացած չէի ինքզինքս, այսքան զրկված ա-

մենադուրյան գործովե մը...»¹: 1920-ական թվականների Թեքեյանի տարագիր կյանքը՝ Շվեյցարիա, Հունաստան, Եգիպտոս, Ֆրանսիա... և իր ժողովրդի հարյուր հազարավոր բեկորների տարրալուծումը աշխարհի չորս ծագերում, համատարած կորուստներն ու փլուզումները բանաստեղծին ստիպում էին նորից ու նորից խորհել ազգային այն արժեքների մասին, որոնք կարող էին ցրոնք դարձած իր ժողովրդին ոչ միայն հավաքել, այլև նրա համար կովան ու նեցուկ դառնալ:

Նկատենք, որ շատ լայն են ազգային ճակատագրի շուրջ թեքեյանական պոեզիայի դրսևորում-ընդգրկումները: Եվ ճիշտ է նկատվել գրականագիտության մեջ, որ *«անհուն է իր մեջ պաշտամունքը մեր սրբանուն մարտիրոսներուն, հայ հանճարին ու հայ ոյժին, անոր Եկեղեցիին ու լեզուին»²*:

Ուշագրավ է, որ 1924 թ. հուլիսի 11-ը թվակիր իր նամակում Թեքեյանը խոսում է դատարկության և մանավանդ կառչելիք «սիւների» մասին՝ *«... դատարկութեան մեջ գալարումներուս աստեն փայթելիք սիւներ կը փնտռեմ»³*:

Ազգային դիմագծի պահպանումը սփյուռքահայության համար այն հարցերի հարցն էր, որ առաջին իսկ օրերից ծառայել էր տարագիր ողջ հայության առջև: Մի բան, որը կարելի էր պահպանել ավանդույթների, լեզվի, մշակույթի, ընտանիքի, գրականության և մանավանդ հավատքի պահպանմամբ: Եվ Թեքեյանը այդ իրական սյուններից մեկը տեսնում է հենց հայ եկեղեցին:

Մեր ժողովրդի հանճարի բարձր դրսևորումներից ու արդյունավորումներից մեկն է եկեղեցին, նրա ստեղծագործ ուժի մի փայլատակումը: Պատահական չէ, որ Թեքեյանը տարբեր տարիների, տարբեր առիթներով անդրադարձել է եկեղեցու դերին ու նշանակությանը, այն դարձրել բանաստեղծության նյութ: Բանաստեղծություններից մեկն էլ 1911 թ. գրված *«Զուարթնոց տաճարին մեջ»* քերթվածն է՝ *«Արարատի դաշտին մեջ»* շարքի լավագույն գործերից մեկը^{*}, որտեղ դեռևս հուսաշատ բանաստեղծը երանությամբ է խոսում այն մարդկանց մասին, որոնց *«հնգիին մեջ»* դեռ կտիրեր խաղաղություն, և Տիրոջ մասին, որ օրհնություն էր սփռում. *«Անոնք ըզՔեզ կ'օրհնեին՝ զի կ'օրհնեի՛ր զիրենք, Տէ՛ր»*:

Բայց փոխվել էին ժամանակները, ինդիքներն այլ էին: Եվ բանաստեղծի հոգում, նրա մտքի ու զգացմունքների բավիղներում հայ կյանքի բարդ մի շրջանում՝ 1924-ին, ծնունդ է առնում *«Եկեղեցին հայկական»* բանաստեղծությունը^{**}, որը ոչ միայն Թեքեյանի, այլև ողջ հայ պոեզիայի սրբազան մատուցներից մեկը պիտի դառնար:

¹ Վ. Թեքեյան, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 252 (1924, 19 հունվարի):

² «ՀԵՄ» հանդես, Երուսաղեմ, 1944, թիւ 1-4, էջ 13:

³ Վ. Թեքեյան, նշվ. գիրքը, էջ 266:

^{*} Այս շարքից են «Մասիսին», «Լուսավորչի կանթեղը», «Հրագրան» գործերը:

^{**} 1933 թ. Փարիզում տպագրված «Յոթելեան Վահան Թեքեյանի քառասունամեայ գրական գործունեութեան» գրքում այս բանաստեղծությունը սխալմամբ թվագրված է 1921 թ.:

Թեքեյանը կռահել էր, որ համատարած ողբերգությունների ու կորուստների այդ շրջանում անցյալի ու ներկայի հաղորդությամբ միայն կարելի է գալիքի տեսիլքն ունենալ:

Ստեղծագործական աստվածային բունկման գերագույն մի պահի՞ ծնունդ է այս բանաստեղծությունը, թե՞ երկարատև մտորումների ու որոնումների ձգված ճանապարհի՞ դժվար է ասել: Իսկ գուցե այդ երկուսի արդյունքով ստեղծված մտքի մի թռիչք, որ հար ապրելու է հայ մարդու հոգում՝ նրան տալով նյութական ու ոչ նյութական հարուստ սնունդ, նրան լսելի դարձնելու հոգու այն կանչը, որ թաքնված է սրտի մի անկյունում, որտեղ էլ որ լինի այդ հայը:

Իհարկե, հորիզոնների վրա միշտ էլ թևածել է հայ եկեղեցու խորհուրդը: Սակայն Թեքեյանն այն իր շոշափելիությամբ կանգնեցրեց հայ մարդու առջև, ոգեկոչեց այն կոչումն ու *կառույցը*, որ նա ունի, որովհետև հայ եկեղեցին իրավամբ, ամեն բանից գատ, նախ և առաջ *Կառույց* է:

Կառույց՝ հոգևոր ու մարմնավոր, կառույց՝ իր ամենատղիղ և ընդլայնված իմաստներով:

Շահան Շահնուրն իր «Ազատն Կոմիտաս» հոդվածում՝ դարերի ընթացքում հայ ժողովրդի տարած *Հաղթանակների* և *Ազատությունների* շարքում հատկապես թվում է չորսը՝ Սուրբ Մեսրոպ, Կոմիտաս, Կաթողիկե և Անդրանիկ: «... Այս չորսերն են միայն, որոնց մօտ կարելի է ապաստանիլ յուսալքման եւ ուրացումի դաժան գիշերներուն...»⁴, – գրում է Շահնուրը:

Շահնուրը նշում է, որ այս չորսից յուրաքանչյուրն այն հիմքերից է, որոնք կարելի են դարձնում նոր ազատություններն ու հաղթանակները:

Հայոց կաթողիկեի մարմնացյալ մի խտացումն է եկեղեցին, որտեղ խնկարկվել են հայ միտքն ու հոգին, գրչածաղկվել մեր պատմությունը, գեղագարդվել մեր տեսիլները, երկինք հասցվել աստվածափառ մեր աղոթքները: Ասել է՝ եկեղեցին արդյունքն է ու մարմնացումը հայ մարդու իմացական ու հոգեկան հարստությունների, նրա ազնվակա-նության վկայականներից մեկը: Եկեղեցին ավիշով լեցուն նաև այն ուժն է, որ դիմացել է դարերի ավերածություններին՝ նման մեր լեզվին, որը, ինչպես գրում է Թեքեյանն իր «Տաղ հայերեն լեզուին» բանաստեղծու-թյունում, զարմանք է հարուցում, «... թե՛ ինչպե՞ս դուն մընացիր էրբ սաստիկ // Քամին քու շուրջըդ փչեց եւ տապալեց ամեն բան...», նման մեր Հոգուն, որը, ինչպես ասվում է «Հայու հոգին» քերթվածում, «... գերդ գինուոր մ'որ կը կռուի անդադար»:

Կյանքի բերումով Թեքեյանը տասնյակ ու տասնյակ եկեղեցիներում է եղել (Վահան անունն էլ ստացել է Սուրբ Վահան Գողթնեցու տոնի օրը ծնված լինելու առիթով), անգամ որոշ ժամանակ աշխատել Կեսարիայի Ս. Կարապետ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքերում, այցելել Ս. Էջմիածնի Մայր կաթողիկե, Օշականի, Զվարթնոցի և այլ

⁴ Շ. Շահնուր, Ազատն Կոմիտաս, Եր., 2003, էջ 6:

տաճարներ, որոնց և խտացում-կերպավորումն ընդհանրացրել է այս բանաստեղծության մեջ՝ շեշտելով եկեղեցու բնութագրական արժեքները, առաջին հերթին՝ նրա ազգահավաք և ազգակառույց այն դերն ու նշանակությունը, որոնք ընդհանրական են բոլոր հայ եկեղեցիների համար:

Բանաստեղծությունը բովանդակում է երեք ոլորտ՝ բանաստեղծի հոգեկան ու զգայական էությունը, հայ նախնիների նվիրումները, Աստծո իջևանատեղի եկեղեցական կառույցը՝ այս բոլորը լեցուն ներքին խորհրդով ու ասելիքով: Այս երեքից ամեն մեկն առանձին-առանձին բնութագրվում է կայուն չափանիշներով՝ առաջինը՝ որպես ստեղծման, մարդկային հոգու ու մտքի արգասաբերման միջոց, երկրորդը՝ որպես «կենսաառողջ» պատմության ոգեղեն ընթացք, երրորդը՝ անցյալի «այլեկոծ ծովից» հոգևոր ու մարմնական խաղաղ նավահանգիստ, բարձր բերդ, շարականի գետ ու մանավանդ՝ դեպի երկնի ճամփա:

Ինչպես նկատելի է, Թեքեյանը հավասարարժեք կողք կողքի է դնում հոգևոր ու մարմնականը, մի բան, որ այնքան բնորոշ է եկեղեցու հանգամանքին: Ի դեպ, այդ **անբաժանելիությունը** քրիստոնեական հավատքի հիմքն է: Չէ՞ որ հոգու՝ այդ բարձր սուբստանցի գոյության միակ բնակավայրը մարդկային մարմինն է, և այդ մարմինն իր հերթին կենդանի է այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեջ բնակվում է այդ հոգին՝ ճիշտ և ճիշտ եկեղեցու պարագայի նման, որը կենդանի մի մարմին (կառույց) է, որտեղ **ներկա** է անտեսանելի հոգին (աղոթքը):

Եվ ուրեմն պատահական չէ, որ բանաստեղծությունն ամբողջությամբ փառաբանումն է եկեղեցու, նրա էության, նրա դերի, նրա կոչման: Ինչպես գրում է Թեքեյանը, եկեղեցում է, որ դարեր շարունակ հայերենով հնչել են պատերը ցնցող «*այլեխոով աղոթքներ*»: Եկեղեցին կառուցման (ուրեմն և արարման) խորհրդանիշն է՝ պապերի կողմից հողից քար առ քար հանված և երկնքից որպես ցող առնված գործունեության արդյունք, սրբասուրբ մի վայր, որտեղ «*Շարականի գետին մօտ*» շուշաններ են ծաղկում, որտեղ «*սկիհին մեջ կիջնէ ինքը Աստված*», և որը «*Հայ Հոգիին եւ Մարմնոյն Ջրահանդերձն է փայլուն*»՝ իր ամբողջության մեջ՝ հաղթության երգ, որը դրսևորվում է ամենուրեք լավող զանգակների բոմբյուններով ու դաշույն ներկայացնող խաչի տեսքով:

Հայ եկեղեցին հայ մարդու հոգու կրողն է, այդ հոգու **Ձևը**, նրա քարեղեն զարդանախշը, հավատքի սյունը, կյանքի կանթեղի պայծառությունը: Այլ խոսքով՝ այն հայ մարդու հոգու մեղեդին է, **Երգն** ու **Նվագը**, ասել է թե՛ երկրայինի ու երկնայինի զուգաչափ ներդաշնակությունը: Չէ՞ որ ինչ որ ներքևում է, նաև վերևում է, և ինչ որ վերևում է, նաև ներքևում է: Այդ ներքև-վերևում էլ հայ մարդն է ու իր եկեղեցին, որտեղ, ինչպես գրում է Թեքեյանն իր «*Ձուարթնոց տաճարին մեջ*» քերթվածում, մեր «*հայրերուն հայրերը*» «*Խոնարհեցան, բայց նաեւ ուղղրեցաւ անընդհատ...*»:

Ընդամենը մի քանի քառատողում արտահայտված այսպիսի խիտ սիմվոլիկա քիչ է պատահում: Նրա ամեն մի բառն ու խոսքը մտածումների է մղում: Բայց այս ամենը «Եկեղեցին հայկական» բանաստեղծության, այսպես ասած, տեսանելի կողմն է: Կա անտեսանելի՝ հոգևոր կողմը՝ եկեղեցին որպես հայ հոգու ծննդավայր և հոգևոր աշխարհ: Եկեղեցին հայ մարդուն տեսանելի է նաև «աչքը գոց», այն «մանկադեմ Յիսուսին» «շնչելու» և «լքսելու» միջոց է, ազգի «Անցեալին» հետ հաղորդվելու կարողություն, մաքրագործվելու հնարավորություն:

«Հայ Հոգիին եւ Մարմնոյն» այդ միասնությունից հատնում է ավելի բարձր մի բան՝ կարևոր մի այլ խորհրդանիշ-գաղափար՝ եկեղեցին որպես հայ **Ոգու** մարմնացում, որ լեզուն է (գրաբարը) ու մշակույթը (երգը), անցյալն է (պատմությունը) ու ներկան (մաքառումը), ավանդույթներն են (կենցաղը) ու ինքը՝ ազգը (ընտանիքը): Այսինքն՝ այն ամենը, առանց որոնց անիմաստ է ու անհնար ժողովրդի գոյությունը:

Եվ ուրեմն՝ Թեքեյանի այս բանաստեղծության ընդգրկումների ծիրը շատ ընդարձակ է, քանի որ այն խոսք է **Անվոխարհիների** մասին, ոգեկոչում գերագույն իդեալի, որ հայկականությունն է ու քրիստոնեությունը, որի խտացումն արտահայտված է խաչի սիմվոլով, որի մեջ Թեքեյանը գերակա իմաստ է դրել:

1924 թ. գրած նամակներից մեկում Թեքեյանը խոսում է Լևոն-Չավեն Սյուրմելյանի «Ասացուածք ծառ տնկելու առթիւ» քերթվածի՝ «Մենելներուս իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի» «սքանչելի վերջին սողի» մասին: Թեքեյանի բնորոշմամբ այդ սողը գալիս է «... կրօնական պաշտման մը վերջին ուժեղ կնիքը դրոշմել քերթուածին: Ծառը, իբրև խաչ, իբրև խաչ մը, որ պիտի աճի, զօրանայ ու կանաչնայ, իր ուղղաձիգ մասին երկու ծայրերովը մենելներուն եւ երկինքին կը դիմէ, անոնցմէ կը սնանի եւ զանոնք իրարու կը կապէ. մինչ իր հորիզոնական մասին՝ բաց թելերուն տեսիլովը, ողջերն իր շուրջ հաւաքելու ձև մը կ'ընէ»⁵:

Թեև Թեքեյանի քերթվածում խաչը ավարտուն ու վերջնական բնութագրմամբ է հանդես գալիս, խաչը՝ որպես դաշույն, սակայն նկատելի է, որ երկու բանաստեղծություններում էլ խաչը էական դեր ունի, իմաստալից խորհրդով է օժտված: Սակայն մի դեպքում խաչը դիտարկվում է որպես անցյալ սերունդների ու երկնքի կապի, նաև «ողջերն իր շուրջ հավաքելու» միջոց, մյուս դեպքում՝ իբրև զեն ու ուժ, պայքարի միջոց:

Թեքեյանի բանաստեղծության բարձրակետերը երկուսն են, մեկը՝ աշխարհիկը՝ խաչերը որպես «դաշոյն» համադրույթն է, երկրորդը՝ ոչ աշխարհիկը՝ «սրկիհին մէջ» իջնող Աստվածը:

Ամբողջ բանաստեղծությունը լեցուն է տեսանելի ու անտես խորհրդանշանային իմաստներով: Այն ընթերցելիս տեղի է ունենում

⁵ Վ. Թեքեան, նշվ. գիրքը, էջ 257 (1924, 14 ապրիլի):

հոգեկան ներքաշում: Ընթերցողը ներսուզվում է կլանող այդ աշխարհի մեջ, դառնում նրա մի մասնիկը, բարձրանում իր «*հասարակ տեղիքեն*», լցվում հուզական ապրումներով, ասես մտնում է եկեղեցի՝ աղոթելու ու մոմ վառելու, պարուրվում «*գուլայ-գուլայ*» երկինք բարձրացող խնկի ծխով:

Սա չի նշանակում, թե բանաստեղծությունը միստիցիզմի թեքեյանական մի դրսևորում է: Հակառակը, այն իր շեշտադրմամբ իրական ու թանձրացական է, խոսք է մեր ազգային ու պատմական կայուն արժեքների մասին, որոնց հոգևոր բովանդակությունը նույնքան նշանակալի է: Առհասարակ, Թեքեյանի պոետական մտածողության յուրահատուկ կողմերից մեկը հայաստանյան պատմական իրողությունների, անձերի, հասկացությունների, երևույթների, աշխարհագրական տեղանունների ու ազգային արժեքների հաճախադեպ ու իմաստալից օգտագործումներն են բանաստեղծական տեքստերում: Դրանք առկա են անգամ ստեղծագործությունների վերնագրերում՝ «Խորհուրդ Վարդանանց», «Յարալեզներ», «Հրագդան», «Կոմիտաս Վարդապետ», «Լուսավորչի կանթեղը», «Մփյուռք», «Սուետիա» և այլն, որի մի դրսևորումն էլ «Եկեղեցին հայկական» գործն է:

Բանաստեղծության մեջ ներկայացվող առարկաները, հայ անցյալին ու ներկային վերաբերող պատկերները, եկեղեցական պարագաներն այնքան տեսանելի են, որ կարելի է գեղարվեստական կտավի վերածել, անգամ՝ եկեղեցի կառուցել: Իսկ իր ամբողջության մեջ այն խնկի ու շարականի բույր է արձակում:

Այս բանաստեղծության վերաբերյալ սփյուռքահայ գրագետ Ա. Մեփերձյանը իրավացիորեն գրել է. «*Թեքեանի Աստուածերգութեան բարձրակէտն է այս քերթուածը: Այստեղ միայն բանաստեղծը չէ, որ կը խօսի, իրեն հետ հայ ժողովուրդին եւ անոր հավատքին բազմադարեան պատմութիւնն է, որ կը քանդակուի*»⁶:

Այդ «*քանդակմանը*» իրենց մեծ նպաստն են բերում բանաստեղծության ընտրված նյութը, հարուստ ու պատկերավոր լեզուն, անթերի հանգավորումն ու կատարյալ կառուցվածքը, բառերի գրաբարյան ձևերի օգտագործումները, եկեղեցական հասկացությունների ու պարագաների անվանումները՝ գավիթ, խորան, խունկ, հոգի, աղոթք, վարագույր, սկիհ, հաղորդություն, շարական, զանգակ, խաչ... ընդամենը մի քանի քառատողում մեր աշխարհիկ ու կրոնական պատմության ամփոփ ներկայացումը, ասվող խոսքի **ոգիացումը**, ավարտվածությունը և այլն, որոնք և, Թեքեյանի խոսքով ասած, այն «*արուեստ-գործիքն*» են, «... *առանց որու չի կրնար մարմնանալ բանաստեղծութիւնը*»:

Հարկավ որոշ չափազանցությամբ, բայց և մեծ իրավասածությամբ

⁶ «Վահան Թեքեյանի 125-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ», Եր., 2004, էջ 89:

⁷ Վ. Թեքեան, Հայերգութիւն եւ հատընտիր քերթուածներ, Պեյրուջ, 1958, էջ 13:

Հակոբ Օշականը Թեքեյանի մասին գրել է, որ նրա բանաստեղծությունների կարևորագույն առանձնահատկություններից է հաստատուն կառուցվածքայնությունը. «Մեր բանաստեղծությունը չունի երկրորդ անուն մը, որուն քերթուածները ներկայացնեն հաստատ, իստապահանջ ճարտարապետութիւն մը, կառուցուած զանակ զանակ, տեւողութեան շատ ընդարձակ պարունակներէ, բայց ամբողջին մէջ հավատարիմ ինքը իրեն»⁸:

Ճիշտ և ճիշտ այդպիսի թեքեյանական «իստապահանջ ճարտարապետութիւնով» ու «շատ ընդարձակ պարունակներով» է գրված նաև «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունը, մի բանաստեղծություն, որը մեր անցյալի ու ներկայի **մեծ վկան** է:

Այս բոլորն իրենց միասնության «գմբեթի» տակ են ամփոփում այդ բանաստեղծությունը և այն դարձնում մեկ ամբողջական մեղեդի: Պատահական չէ, որ այս բանաստեղծության համար նաև երաժշտություն է գրվել, որի հեղինակը սփյուռքահայ Համբարձում Պերպերյանն է:

Բանալի բառեր – սփյուռք, եկեղեցի, ազգային արժեքներ, հավատք, ոգի, աղոթք, ժողովուրդ, խաչ, աստվածերգություն, պատկերավոր լեզու

АРЦУН АВАГЯН – Об одном стихотворении Ваана Текеяна. – Статья посвящена одному из шедевров западноармянского поэта В. Текеяна (1878 – 1945) – стихотворению «Церковь армянская» и побудительным причинам его создания. Речь идёт, в частности, о некоторых исходных пунктах и свойствах этого стихотворного текста, возвышающих его до уровня молитвословия. Небольшое произведение, насыщенное смыслом и отмеченное образной речью, отображает идущие от предков и донныне живые национальные и религиозные ценности, которые составляют интеллектуальные и духовные святыни всякого армянина. Для поэта церковь – опора духовной жизни, носитель и хранитель вековых национальных символов.

Ключевые слова: диаспора, церковь, национальные ценности, вера, дух, молитва, народ, крест, богослужение, образная речь

ARTSRUN AVAGYAN – About a Poem by Vahan Tekeyan. – The article presents the motives and stimuli of writing one of the masterpieces of V. Tekeyan's poetry – the poem *The Armenian Church*, which reveals some of the principles and features of V. Tekeyan's divine singing. The poem presents the national and religious values coming from our ancestors and continuing at a high artistic level, which have made up the spiritual and mental dedications of the Armenian people for centuries. V. Tekeyan presents the church as a structure and pillar of life and a bearer and guardian of national symbols.

Key words: diaspora, church, national values, faith, spirit, prayer, people, cross, divine singing, figurative language.

Ներկայացվել է՝ 19.10.2020, Գրախոսվել է՝ 21.11.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020

⁸ Հ. Օշական, Վահան Թեքեյան, Պեյրուք, 1985, էջ 84: